ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

*ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

# *ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021Թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ*




ԹԻՎ 1

*ԵՐԵՎԱՆ – 2021*

### Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվարին*

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2021թ. հունվարը 2020թ. հունվարի նկատմամբ) կազմել է 4.5%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 2.2%:

| Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ | 2021թ. | | |
|---|---|---|---|
| | հունվարը | | |
| | 2020թ. հունվարի նկատմամբ | 2020թ. դեկտեմբերի նկատմամբ | 2015թ. նկատմամբ ** |
| | տոկոսային փոփոխություն | | ինդեքս |
| 00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը | 4.5 | 2.2 | 110.1 |
| այդ թվում՝ | | | |
| 01 սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք | 6.4 | 4.5 | 114.9 |
| 02 ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ | 10.8 | 0.7 | 126.5 |
| 03 հագուստ և կոշիկ | 2.6 | 0.7 | 108.5 |
| 04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ | 0.6 | 0.3 | 100.2 |
| 05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն | 5.8 | 1.9 | 97.6 |
| 06 առողջապահություն | 5.6 | 1.7 | 114.9 |
| 07 տրանսպորտ | 5.7 | 1.0 | 113.1 |
| 08 կապ | 0.5 | 0.4 | 98.7 |
| 09 հանգիստ և մշակույթ | -0.8 | 1.5 | 106.8 |
| 10 կրթություն | 2.0 | 0.0 | 114.4 |
| 11 ռեստորաններ և հյուրանոցներ | 1.6 | 0.3 | 109.8 |
| 12 տարբեր ապրանքներ և ծառայություններ | 3.5 | 1.0 | 106.7 |

Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. հունվարին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%




---

* Սույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվարի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների և գների ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում՝ կուտակային (աճողական)) տեղեկատվությունը զետեղվում է <<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում>> ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305):

** *Եվրոստատի կողմից սահմանված հղման ժամանակաշրջան:*

Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. հունվարին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

%

| | 2021թ. | |
|---|---|---|
| | հունվարը | |
| | 2020թ. հունվարի նկատմամբ | 2020թ. դեկտեմբերի նկատմամբ |
| Սպառման ապրանքներ | 6.3 | 3.3 |
| *այդ թվում՝* | | |
| սննդամթերք, խմիչք և ծխախոտ | 6.8 | 4.1 |
| ոչ պարենային ապրանքներ | 5.5 | 1.7 |
| Ծառայություններ | 1.4 | 0.3 |

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2021թ. հունվարին 2020թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 1.6-2.5%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում սպառողական գների մակարդակն աճել է 2.3%-ով:

***Սննդամթերքի գներ:*** 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 6.4%, իսկ դեկտեմբերի համեմատ 4.5% գնաճ: Վերջինիս մեծապես նպաստել են մրգի և բանջարեղենի՝ համապատասխանաբար 9.5% և 23.0% գնաճերը:

Բանջարեղենի ապրանքախմբում[1] 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ արձանագրվել է 9.9%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 23.0% գնաճ:

Մրգի ապրանքախմբում[1] 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ արձանագրվել է 12.0%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 9.5% գնաճ:

Բանջարեղենի և մրգի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվարին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,%




[1] 2021թ. հունվարին 2020թ. հունվար և դեկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 2-ում:

**2021թ. հունվարին դեկտեմբերի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 17.1%: Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 8.35% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 1.4 տոկոսային կետով:**

Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ արձանագրվել է 16.9%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 3.2% գնաճ (արևածաղկի բուսական յուղի միջին գնաճը 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ կազմել է 44.3%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 6.7%):

Հացաբուլկեղենի և ձավարեղենի ապրանքախմբում 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ գրանցվել է 8.4%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.0% գնաճ (հացի և ալյուրի գնաճը 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ կազմել է համապատասխանաբար 7.9% և 12.5%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.8% և 1.6% ):

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ արձանագրվել է 7.7%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.9% գնաճ: Ձվի գինը 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ աճել է 26.4%-ով, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.7%-ով:

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ արձանագրվել է 40.7%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.7% գնաճ:

2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ մսամթերքի ապրանքախմբում արձանագրվել է 0.1% գնանկում, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.2% գնաճ:

Ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբում 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ գրանցվել է 10.8%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.7% գնաճ (ալկոհոլային խմիչքի միջին գնաճը 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ կազմել է 12.9%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.1%):

2021թ. հունվարին դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ձկան և ծովամթերքի՝ 0.1%, ոչ ալկոհոլային խմիչքի 1.1%, սուրճի, թեյի կակաոյի 1.2% գնաճ:

***Ոչ պարենային ապրանքների գներ:*** 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 5.5%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.7% գնաճ:

2021թ. հունվարին 2020թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի՝ 0.2%, կենցաղային և այգեգործական գործիքների՝ 0.3%, գորգերի և հատակի ծածկերի՝ 0.5%, ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու, տարբեր տեսակի կոշկեղենի՝ 0.6%, հագուստի, վառելանյութերի և քսանյութերի՝ 0.7%, կահույքի և կահավորանքի՝ 0.9%, կենցաղային փոքր էլեկտրական սարքերի, մաքրող, լվացող միջոցների՝ 2.6%, խոշոր կենցաղային սարքերի, ոսկերչական զարդերի՝ 2.9%, դեղագործական ապրանքների 4.6% գնաճ: Գրասենյակային պարագաների գները նշված ժամանակահատվածում մնացել են անփոփոխ:

2021թ. հունվարին 2020թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 3.1% և 3.8%-ով, իսկ 2020թ. հունվարի համեմատ արձանագրվել է 9.5% և 20.2% գնանկում:

**Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2018-2021թթ.**

2015թ. նկատմամբ



***Ծառայությունների սակագներ:*** Մատուցված ծառայությունների ոլորտում 2021թ. հունվարին 2020թ. հունվարի համեմատ արձանագրվել է սակագների 1.4%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.3% հավելաճ:

Մատուցված ծառայություններից 2021թ. հունվարին 2020թ. դեկտեմբերի համեմատ համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է փոստային ծառայությունների ոլորտում (13.1%), ինչը պայմանավորվել է ծանրոցների առաքման ծառայությունների սակագների 16.3% հավելաճով:

***Արտարժույթի շուկա:*** 2021թ. հունվարին 2020թ. դեկտեմբերի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 2.2% և 0.4% հավելաճ (ԱՄՆ դոլարն արժևորվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 1.4% և 0.2% հավելաճ: 2021թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 521.2 դրամ, ինչը 8.8%-ով բարձր է 2020թ. հունվարի համապատասխան ցուցանիշից (479.2 դրամ):

*Հավելված 1*

**Հայաստանի Հանրապետությունում 2021թ. սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների և ծառայությունների կազմի ու կառուցվածքի, տեսակարար կշիռների վերանայման և բազիսային ժամանակաշրջանի փոփոխության մասին**

Համաձայն սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) հաշվարկման մեթոդաբանության և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության տվյալները, կատարվել է սպառողական զամբյուղի կշիռների վերահաշվարկ, քանզի այդ հետազոտության արդյունքներով արձանագրվել են սպառման համամասնությունների որոշակի փոփոխություններ 2020 թվականի ՍԳԻ-ի համար կիրառվող զամբյուղի համեմատ:

2021 թվականի հունվարից ՍԳԻ-ի համար ինդեքսների բազիսային ժամանակաշրջան է ընդունվում 2020 թվականի դեկտեմբեր ամիսը:

Հիմք ընդունելով տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված (ընտրանքային) հետազոտության դրամական ծախսումների մասին տվյալները, կատարվել է ՍԳԻ-ի հաշվարկման համար ապրանք-ծառայությունների կազմի ընտրանք-արդիականացում. ընտրանքի ստորին մակարդակ է սահմանվել տնային տնտեսությունների կողմից իրականացված ընդհանուր դրամական ծախսումների ծավալում 0.001 տեսակարար կշիռը: Վերը նշված ընտրանքի համաձայն, ինչպես նաև զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների սպառողական շուկայի առկա իրավիճակին ուղղված արդիականացման արդյունքում ՍԳԻ-ի զամբյուղի կազմը 427 անվանում ապրանքներից և ծառայու-թյուններից նվազեցվել է 2-ով՝ կազմելով 425 անվանում ապրանք և ծառայություն: Զամբյուղում ընտրանքի համար ընդունված շեմից ցածր կշիռ ունեցել են 1 պարենային ապրանք, 4 ոչ պարենային ապրանքներ և 1 ծառայություն: Զամբյուղի կազմում ներառվել են 2 ոչ պարենային ապրանքներ և 2 ծառայություն, 5 ոչ պարենային ապրանքներ փոխարինվել են նոր տեսակներով, իսկ 5 ոչ պարենային ապրանքների տեխնիկական բնութագրերն արդիականացվել են:

Առանձին ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռների փոփոխությունները 2021 թվականին 2020 թվականի համեմատ առաջ են բերել նաև խոշորացված ապրանքային (ծառայության) խմբերի տեսակարար կշիռների որոշակի տեղաշարժեր (տես՝ աղյուսակ1):

Իրականացվել է ՀՀ հետազոտվող 10 բնակավայրերի (մարզերի) և Երևան քաղաքի տեսակարար կշիռների վերահաշվարկ, հիմք ընդունելով մշտական բնակչության թվաքանակը, ապրանքաշրջանա-ռության և ծառայությունների ծավալների մասին 2019 թվականի ցուցանիշները (տես՝ աղյուսակ2):

*Աղյուսակ 1*

ՀՀ սպառողական գների ինդեքսի խոշորացված խմբերի տեսակարար կշիռները

%

| | Ընդամենը | *այդ թվում՝* | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Սպառման ապրանքներ | *դրանցից* | | | | Ծառայու-թյուններ |
| | | | պարենային ապրանքներ (ներառյալ ալկո-հոլային խմիչք և ծխախոտ) | *այդ թվում՝* | | ոչ պա-րենային ապրանք-ներ | |
| | | | | պարենա յին ապ-րանքներ | ալկոհոլա-յին խմիչք և ծխախոտ | | |
| 2020 | 100.0 | 64.43 | 43.41 | 39.23 | 4.17 | 21.01 | 35.57 |
| 2021 | 100.0 | 63.87 | 41.66 | 37.87 | 4.70 | 22.21 | 36.13 |
| 2021թ. 2020թ. համեմատ, %-ային կետով տարբերություն | | -0.56 | -1.75 | -1.36 | 0.53 | 1.2 | 0.56 |

*Աղյուսակ 2*

Սպառողական գների ինդեքսի տեսակարար կշիռներն ըստ բնակավայրերի

*%*

| | 2020թ. | 2021թ. |
|---|---|---|
| ՀՀ , ընդամենը | 100.0 | 100.0 |
| *այդ թվում՝* | | |
| Երևան | 57.69 | 57.56 |
| Գյումրի | 5.25 | 5.33 |
| Վանաձոր | 4.48 | 4.53 |
| Վաղարշապատ | 5.72 | 5.91 |
| Աշտարակ | 2.64 | 2.71 |
| Իջևան | 2.90 | 2.86 |
| Հրազդան | 7.00 | 6.35 |
| Եղեգնաձոր | 1.08 | 1.11 |
| Գավառ | 4.50 | 4.68 |
| Կապան | 3.01 | 3.17 |
| Արարատ | 5.73 | 5.79 |

*Հավելված 2*

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների

տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում 2021թ.

| | 2021թ. հունվարը | |
|---|---|---|
| | 2020թ. դեկտեմբերի նկատմամբ | 2020թ. հունվարի նկատմամբ |
| Խնձոր | 12.7 | 30.2 |
| Տանձ | 18.6 | 15.1 |
| Նուռ | 15.9 | 12.9 |
| Խաղող | 16.6 | -16.4 |
| Աղամաթուզ (բանան) | 13.1 | 4.7 |
| Նարինջ | -1.0 | 32.3 |
| Մանդարին | 17.2 | 15.6 |
| Կիտրոն | 0.1 | 5.5 |
| Ելակ | 12.1 | -10.4 |
| | | |
| Կաղամբ | 5.2 | -1.2 |
| Կանաչ սոխ | 83.5 | 37.5 |
| Խառը կանաչեղեն | 96.4 | 53.5 |
| Լոլիկ | 21.2 | 0.1 |
| Վարունգ | 7.8 | -6.7 |
| Սմբուկ | 47.0 | 66.8 |
| Պղպեղ | 33.6 | 22.6 |
| Գազար | 22.3 | -2.5 |
| Ճակնդեղ | 8.1 | -28.6 |
| Գլուխ սոխ | 8.1 | -15.9 |
| Սխտոր | 3.4 | 95.4 |
| Սունկ | 8.6 | -1.2 |
| Կարտոֆիլ | 12.2 | -17.6 |

*Հավելված 3*

## *Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում* [1]

| | 2019թ. դեկտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ | 2020թ. | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվարը | փետրվարը | մարտը | ապրիլը | մայիսը | հունիսը | հուլիսը | օգոստոսը | սեպտեմբերը | հոկտեմբերը | նոյեմբերը | դեկտեմբերը | դեկտեմբերը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ |
| | | նախորդ ամսվա նկատմամբ | | | | | | | | | | | | |
| Ավստրիա | 101.8 | 99.3 | 100.0 | 100.5 | 100.2 | 99.1 | 100.4 | 99.9 | 99.7 | 100.8 | 100.2 | 100.2 | 100.6 | 101.0 |
| Բելգիա | 100.9 | 98.9 | 101.5 | 99.6 | 99.8 | 99.8 | 100.4 | 100.7 | 98.5 | 100.8 | 100.2 | 99.8 | 100.5 | 100.4 |
| Բուլղարիա | 103.1 | 100.5 | 100.0 | 99.5 | 99.6 | 99.8 | 99.9 | 100.8 | 100.4 | 98.8 | 100.2 | 100.0 | 100.5 | 100.0 |
| Հունգարիա | 104.1 | 100.9 | 100.3 | 100.2 | 99.5 | 100.4 | 100.4 | 101.2 | 100.0 | 99.5 | 100.2 | 99.8 | 100.3 | 102.8 |
| Գերմանիա | 101.5 | 99.2 | 100.6 | 100.1 | 100.4 | 100.0 | 100.7 | 99.5 | 99.8 | 99.6 | 100.0 | 99.0 | 100.6 | 99.3 |
| Հունաստան | 101.1 | 98.7 | 99.6 | 101.2 | 99.9 | 99.8 | 99.3 | 98.6 | 99.3 | 101.5 | 100.2 | 99.2 | 100.2 | 97.6 |
| Դանիա | 100.8 | 100.2 | 100.4 | 99.7 | 99.9 | 99.9 | 100.1 | 100.9 | 99.6 | 99.8 | 100.3 | 99.8 | 99.8 | 100.4 |
| Իռլանդիա | 101.1 | 99.3 | 100.6 | 100.4 | 99.6 | 99.4 | 100.4 | 99.8 | 99.9 | 99.6 | 99.5 | 100.3 | 100.2 | 99.0 |
| Իսպանիա | 100.8 | 98.6 | 99.9 | 100.6 | 100.4 | 100.1 | 100.4 | 98.4 | 100.0 | 100.4 | 100.3 | 100.1 | 100.2 | 99.4 |
| Իտալիա | 100.5 | 98.2 | 99.5 | 102.2 | 100.5 | 99.7 | 100.0 | 99.3 | 98.7 | 100.9 | 100.6 | 100.0 | 100.2 | 99.7 |
| Կիպրոս | 100.7 | 99.2 | 100.2 | 100.2 | 99.9 | 100.1 | 100.4 | 99.8 | 100.8 | 99.2 | 100.2 | 99.8 | 99.6 | 99.2 |
| Լատվիա | 102.1 | 100.3 | 100.2 | 100.3 | 99.5 | 99.7 | 100.2 | 100.3 | 99.6 | 99.9 | 99.9 | 99.7 | 100.0 | 99.5 |
| Լիտվա | 102.7 | 100.2 | 100.0 | 99.9 | 100.2 | 99.5 | 100.4 | 99.7 | 99.8 | 100.3 | 100.0 | 99.9 | 100.0 | 99.9 |
| Լյուքսեմբուրգ | 101.8 | 99.6 | 101.0 | 98.8 | 99.2 | 99.7 | 100.9 | 99.7 | 100.9 | 99.8 | 100.0 | 99.8 | 100.4 | 99.7 |
| Մալթա | 101.3 | 98.6 | 100.6 | 101.0 | 102.9 | 101.2 | 101.4 | 100.0 | 100.7 | 98.7 | 98.7 | 96.6 | 99.7 | 100.2 |
| Նիդերլանդներ | 102.8 | 98.7 | 100.9 | 100.3 | 101.0 | 99.8 | 100.5 | 100.9 | 99.3 | 99.6 | 100.8 | 98.8 | 100.5 | 100.9 |
| Լեհաստան | 103.0 | 100.7 | 100.6 | 100.2 | 100.0 | 100.8 | 100.6 | 99.9 | 99.9 | 100.2 | 100.3 | 100.0 | 100.3 | 103.4 |
| Պորտուգալիա | 100.4 | 99.2 | 99.4 | 101.6 | 100.8 | 99.8 | 101.2 | 98.0 | 99.7 | 100.8 | 99.9 | 99.5 | 99.9 | 99.7 |
| Ռումինիա | 104.0 | 100.7 | 100.0 | 100.4 | 100.3 | 100.0 | 100.0 | 100.2 | 100.0 | 99.6 | 100.1 | 100.0 | 100.6 | 101.8 |
| Սլովակիա | 103.2 | 101.3 | 100.1 | 100.0 | 99.9 | 100.3 | 99.9 | 100.1 | 99.9 | 100.0 | 100.1 | 100.1 | 99.9 | 101.6 |
| Սլովենիա | 102.0 | 99.5 | 100.4 | 99.4 | 98.7 | 100.7 | 100.9 | 99.8 | 100.0 | 99.8 | 100.3 | 99.4 | 99.9 | 98.8 |
| Ֆինլանդիա | 101.1 | 99.6 | 100.5 | 99.8 | 99.6 | 99.9 | 100.2 | 100.3 | 100.0 | 100.0 | 100.1 | 99.9 | 100.2 | 100.2 |
| Ֆրանսիա | 101.6 | 99.5 | 100.0 | 100.1 | 100.0 | 100.2 | 100.1 | 100.4 | 99.9 | 99.4 | 100.0 | 100.2 | 100.2 | 100.0 |
| Խորվաթիա | 101.3 | 99.9 | 99.5 | 100.0 | 100.0 | 99.9 | 100.5 | 100.3 | 99.8 | 99.9 | 100.4 | 99.8 | 99.6 | 99.7 |
| Չեխիայի Հանրապետություն | 103.2 | 101.6 | 100.3 | 100.0 | 99.8 | 100.5 | 100.5 | 100.5 | 100.0 | 99.4 | 100.1 | 99.9 | 99.8 | 102.4 |
| Շվեդիա | 101.7 | 98.7 | 100.4 | 99.8 | 99.6 | 100.6 | 100.6 | 100.2 | 99.8 | 100.1 | 99.9 | 99.9 | 100.8 | 100.6 |
| Էստոնիա | 101.8 | 99.4 | 100.6 | 99.4 | 99.7 | 99.4 | 100.7 | 100.0 | 100.6 | 99.9 | 99.4 | 100.1 | 100.0 | 99.1 |
| Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27)[2] | 101.6 | 99.3 | 100.2 | 100.5 | 100.2 | 100.0 | 100.3 | 99.8 | 99.7 | 100.0 | 100.2 | 99.7 | 100.3 | 100.2 |
| Հայաստան | 100.7 | 101.4 | 99.8 | 100.5 | 100.9 | 99.9 | 98.6 | 97.9 | 99.9 | 99.8 | 100.5 | 101.3 | 103.4 | 103.7 |
| Ռուսաստան | 103.0 | 100.4 | 100.3 | 100.6 | 100.8 | 100.3 | 100.2 | 100.4 | 100.0 | 99.9 | 100.4 | 100.7 | 100.8 | 104.9 |
| Բելառուս | 104.7 | 100.9 | 101.0 | 100.9 | 100.6 | 99.9 | 100.2 | 100.2 | 100.2 | 100.9 | 100.6 | 100.7 | 101.2 | 107.4 |
| Ուկրաինա | 104.1 | 100.2 | 99.7 | 100.8 | 100.8 | 100.3 | 100.2 | 99.4 | 99.8 | 100.5 | 101.0 | 101.3 | 100.9 | 105.0 |
| Ղազախստան | 105.4 | 100.7 | 100.6 | 100.9 | 100.9 | 100.5 | 100.4 | 100.3 | 100.1 | 100.3 | 100.6 | 100.9 | 100.9 | 107.5 |
| Ղրղզստան | 103.1 | 100.6 | 100.6 | 101.5 | 102.2 | 98.8 | 99.4 | 99.4 | 99.8 | 100.7 | 102.3 | 101.8 | 102.3 | 109.7 |
| Մոլդովա | 107.5 | 100.6 | 99.98 | 100.1 | 100.2 | 100.2 | 99.99 | 99.8 | 99.2 | 99.7 | 100.1 | 100.2 | 100.3 | 100.4 |
| Տաջիկստան | . . . | 100.6 | 100.4 | 101.6 | 102.2 | 100.5 | 99.9 | 100.3 | 100.2 | . . . | . . . | . . . | . . . | . . . |
| Վրաստան | 107.0 | 100.7 | 100.3 | 100.7 | 100.9 | 100.2 | 98.6 | 99.5 | 100.0 | 100.7 | 100.8 | 100.9 | 99.0 | 102.4 |
| Կանադա | 102.2 | 100.3 | 100.4 | 99.4 | 99.3 | 100.3 | 100.8 | 100.0 | 99.9 | 99.9 | 100.4 | 100.1 | 99.8 | 100.7 |
| Նորվեգիա | 101.2 | 99.9 | 99.9 | 99.9 | 100.5 | 100.2 | 100.3 | 100.8 | 99.5 | 100.4 | 100.4 | 99.1 | 100.6 | 101.4 |
| Բրազիլիա | 104.3 | 100.2 | 100.3 | 100.1 | 99.7 | 99.6 | 100.3 | 100.4 | 100.2 | 100.6 | 100.9 | 100.9 | 101.4 | 104.5 |
| Կորեայի Հանրապետություն | 100.7 | 100.6 | 100.0 | 99.8 | 99.4 | 99.8 | 100.2 | 100.0 | 100.6 | 100.7 | 99.4 | 99.9 | 100.2 | 100.5 |
| Չինաստան | 104.5 | 101.4 | 100.8 | 98.8 | 99.1 | 99.2 | 99.9 | 100.6 | 100.4 | 100.2 | 99.7 | 99.4 | 100.7 | 100.2 |
| Միացյալ Թագավորություն | 101.3 | 99.7 | 100.4 | 100.0 | 99.8 | 100.0 | 100.1 | 100.4 | 99.6 | 100.4 | 100.0 | 99.9 | … | … |
| ԱՄՆ | 102.3 | 100.4 | 100.3 | 99.8 | 99.3 | 100.0 | 100.5 | 100.5 | 100.3 | 100.1 | 100.0 | 99.9 | 100.1 | 101.4 |
| Թուրքիա | 111.8 | 101.4 | 100.4 | 100.6 | 100.9 | 101.4 | 101.1 | 100.6 | 100.9 | 101.0 | 102.1 | 102.3 | 101.3 | 114.6 |
| Շվեյցարիա | 99.9 | 99.6 | 99.9 | 100.1 | 100.1 | 99.8 | 99.9 | 100.1 | 99.9 | 99.9 | 100.0 | 99.6 | 100.1 | 99.0 |
| Ճապոնիա | 100.8 | 99.9 | 99.8 | 100.0 | 99.9 | 100.0 | 99.9 | 100.1 | 100.2 | 99.9 | 99.9 | 99.5 | 99.7 | 98.8 |

[1] Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում զետեղված «2020թ. դեկտեմբերի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

[2] Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

**«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվար-փետրվարին»** մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2020 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2021թ. մարտ ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 131):